



ՀԻՒԼԷԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ՓԱԿՈՒՂԻՒ ԿՈՋԵՒ

ԱՄՆ-ի Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, որ Իրանի հետ հիւլէական համաձայնագրին շուրջ տեղի ունեցող բանակցութիւնները մտած են փակուղի: Իրանի տուած պատահանը՝ ԱՄՆ-ի առաջարկներուն, անընդունելի է:



Ըստ Նոյն աղբիւրին, նախագահ Ծօ Պայտըն պիտի շարունակէ բանակցութեան հողովոյժը այնքան ատեն որ տրամաբանական է: Բոլոր կարելիութիւնները կը սերտորէին, համաձայնութեան հասնին թէ ոչ: 14 Սեպտեմբերին ալ Երոպական Միութեան Արտաքին յարաբերութեան յանձնակատար Ժոզեփ Դորթլ յայտարարած էր, որ Իրանի հետ բանակցութիւնը հասած էր փակուղի:

ՊԼԻՆԵՐՆ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԵ ՈՌՈՍԻԱՆ

ԱՄՆ-ի արտաքին գործերու նախարար Անթոնի Դիլինքըն ամբաստանեց Ռուսիան անընդունելի արարքներ կատարելու մէջ, որոնք կրնան հասնիլ պատերազմի ոճիրի,

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԱՄԱՎԱՐԿԸ

Լիբանանի խորհրդարանը երէկ գումարեց ժողով մը՝ սերտելու համար ամավարկը կամ պիտոճէն եւ վաւերացնելու համար կարգ մը անհրաժեշտ օրէնքներ: Զննար-



կումը սկսաւ ծախքի քննութեամբ: Խորհրդարանը վաւերացուց պետական հատուածի բոլոր պաշտօնեաներուն եւ թռչակառուներուն աշխատավարձը բազմապատկել երեքով, որպէս ընկերային օժանդակութիւն: Խորհրդարանը չկրցաւ վաւերացնել քաղցկէտի հիւանդներուն ծախքը, որ կը հասնի 45 միլիոն տոլարի, կարգ մը երեսփոխաններու մեկնումին պատճառով:

ԴՐԱՍԱՏՈՒՆԵՐՈՒ ՌԴԻԱՎԱՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒ

Աւելի յաճախակի դարձած է յաճախորդներու մուտքը դրամատուն եւ բռնի պահանջքը իրենց ի պահ դրած գումարը ստանալու համար: Երէկ դարձեալ տեղի ունեցան



դէպքեր Լիբանանի գանազան շրջաններու մէջ եւ յաճախորդը իր ի պահ դրած գումարէն մաս մը առած հեռացաւ դրամատունէն: Սակայն այս բոլորը լաւ նշաններ չեն երկրի տնտեսական եւ ընկերային վատ վիճակին մասին:

Միւս կողմէ, Լիբանանի դրամատուներու պաշտօնեաներու սենտիքայի նախագահ Ասատ Խուրի յայտարարեց, որ եթէ կառավարութիւնը չկարենայ զգայել այս սանձարձակ վիճակը, հեռու չէ այն օրը, երբ դրամատուները կը փակեն իրենց դռները: Ինչ որ կը պատահի դրամատուներու նկատմամբ հասած է ծրագրուած աշխատանքի սահմանին: Ան առաջարկեց իւրաքանչիւր դրամատան մէջ հաստատել յաճախորդներու յանձնախումբ մը, որ կարելի ընտանալին մէջ լուծէ մարդոց առօրեայ հարցերը մինչեւ որ կառավարութիւնը մշակէ յստակ ծրագիր՝ այս կարեւոր հատուածին հարցերը լուծելու համար:

Նոյնպիսի առաջարկ մը կատարեց Յաճախորդներու համախմբումի նախագահը, պահանջելով կարելի սահմանին մէջ լուծել յաճախորդներուն հարցերը, որպէսզի չհիմեն բռնութեան եւ երկիրը չհասնի քառսային վիճակի:

Ուրբանիոյ մէջ հարիւրաւոր թաղուած դիակներ գտնելէ ետք այն շրջաններուն մէջ, ուրկէ ան քաշուեցաւ:



Ըստ Պիլնքընի, Իւզպէքիստանի մէջ գումարուած գազաթաժողովին Չինաստան եւ Յնկաստան ճնշում բանեցուցած են Ռուսիոյ վրայ՝ աւարտելու համար Ուրբանիոյ պատերազմը: Երկու երկիրները կը վախնան այդ պատերազմի հետեւանքներէն:

ԼԱՐՈՒՄԾ ԿԻՃԱԿ

Քիրկիզիստանի սահմանային գոտիի պատասխանատուներ յայտարարեցին, որ Թաճիքիստան շարունակած է



սահմանային գոտիի ռմբակոծումը: Թիրախ դարձած են սահմանային գոտիի պաշտպանութեան ուժերը երկու գիւղերու մէջ: Իւզպէքիստանի մէջ կայացած գերաստիճանին, երկու երկիրներու նախագահները ժողով գումարած էին եւ համաձայնած էին ուժերը քաշել սահմանային շրջանէն:

ՆՊԱՏԱԿԸ ՏՈՒՊԱՍՆ Է

Ռուսիոյ Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին յայտարարեց, որ Արեւմուտքը հին ծրագիր մը ունի Ռուսիան բաժնելու: Դժբախտաբար Ուրբանիան կը գործածուի որպէս միջոց այդ ծրագիրը գործադրելու համար: Ան անցնուց, որ պիտի հաղարծեն որեւէ յարձակումի, որու կ'ենթարկուին Ռուսիոյ ուժանիւթի կայանները:



Փութին անցնուց, որ Ուրբանիա մերժեց շարունակել բանակցութիւնները: Ռուսիոյ Նպատակը Տոնկասը ազատագրելն է: Ան յայտարարեց, որ Չինաստանի նախագահին հետ խօսած է երկու երկիրներուն միջեւ առեւտուրի զարգացման մասին:

Միւս կողմէ, Փութին Սամարղանտի գազաթաժողովին ժողով գումարեց Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հետ եւ երկու կողմերը համաձայնեցան, որ Թուրքիա ռուսական կազին փոխարժեքին 25 առ հարիւր վճարէ ռուսական ռուպլով:

ԽԱՄԻՆԵԻՒ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԿԻՃԱԿԸ

Ամերիկեան «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթը հրապարակեց լուր մը, ըստ որուն, Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի



Խամենեյի առողջական վիճակը վատթարացած է: Անոր մօտիկ շրջանակէն անձեր յայտնեցին, որ ան բժշկական հսկողութեան տակ է: Անցեալ շաբաթ, Իրանի հոգեւոր առաջնորդը շնչած էր իր ներկայութեամբ կայանալիք բոլոր ժողովները:

ԴԻՄՈՒՄ ԱՐԿԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՄԻՆ

Հայաստանի Հանրապետութեան միջազգային իրաւական հարցերու պատասխանատուի խօսակը յայտարարեց, որ Հայաստան պիտի դիմէ Արդարութեան Միջազգային դատարան, բողոքելու համար Ատրպէյճանի կատարած



քաղաքացիական թիրախներու ռմբակոծումին, վարած խտրական քաղաքականութեան դէմ եւ այլ հիմքի վրայ:

ՉՈՅԵՐՈՒ ԹԻՆԸ՝ 135

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան ժողովին սկիզբը գնահատեց այն զոհողութիւնը, որ կատարեցին հայ զինուորները հայրենիքի պաշտպանութեան համար: Կառավարութեան անդամները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին զոհերուն յիշատակը: Վարչապետը յայտարարեց, որ զոհերուն պաշտօնական թիւը 135 է: Անշուշտ կան կորսուած զինուորներ եւ բազմաթիւ վիրաւորներ:

ՓՈՒԹԻՆ ՄՏԱՅՈՒԹԻՒՆ ՅԱՅՏԵԱԾ Է

Ռուսիոյ Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ իր ժողովի ընթացքին մտահոգութիւն յայտնած է Հայաստան-Ատրպէյճան սահմանին վրայ տիրող կացութեան առնչութեամբ: Ըստ Փութինի, բոլորին ջանքերով մագլցումը դադարած է, սակայն լարուածութիւնը տակաւին կը շարունակուի: Այս ժողովէն առաջ նախագահ Փութին հեռախօսային հաղորդակցութիւն ունեցած էր Հայաստանի վարչապետ Փաշինեանի հետ, որ տիրող վիճակին պատճառով բացակայած էր Սամարղանտի գազաթաժողովէն:

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետութեան Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմեն Գրիգորեան իր դժգոհութիւնը յայտնեց ՀԱԳԿ-ի քայլերուն առնչութեամբ: Ան յայտարարեց, որ կազմակերպութիւնը յուսախաբ ըրաւ Հա-



յաստանը, երբ չկրցաւ Ատրպէյճանի գոթը Հայաստանի մէջ իր գրաւած շրջաններէն դուրս հանել:

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՀԱԿԱՂԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Հունգարիոյ վարչապետ Վիթթօ Օրպան հակադարձեց Երոպական խորհրդարանի ամբաստանութեան, թէ իր երկիրը կ'ոտնակոխէ Երոպայի սկզբունքները իր վարած քաղաքականութեամբ: Ան յայտարարեց, որ ալ ձանձրացաւ Երոպական խորհրդարանի կատարած քննադատութիւններէն: Անոնք հասան ծիծաղելիի սահմանին: Հարկ է նշել, որ երոպական կառույցներ սկսած են հաշտ



աջով չդիտել Հունգարիոյ վարած քաղաքականութիւնը, որ զրատապարտեց Ռուսիան եւ անոր հետ կը շարունակէ վարել բարեկամական յարաբերութիւն, երբ ամբողջ Երոպան լծուած է հակառուս քաղաքականութեան:

ԶՐՅԵՐԵՂ ԻՏԱԼԻՈՅ ՄԵՋ

Իտալիոյ իշխանութիւնները յայտարարեցին, որ երկրի կեդրոնական մասը հարուածած ջրհեղեղը պատճառած է ութ գոի: Երկու ժամուան մէջ տեղացած է 400 միլիմետր անձրեւ: Անցնա քաղաքին մէջ եւ շրջակայքը, Ատրիաթիք ծովու շրջանին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏՆ ՈՒ ՎՉԵՂ ԵՆԻՍՏՐԱԿԱՆ ԲԵՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԵՏԱԳԱՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՅԵՐ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Վերակառուցման եւ զարգացման երրորդական դրամատան (ՎԶԵԴ) նախագահ Օտիլ Ռեյնո-Պասսոն:

Վարչապետը կարեւորած է ՀՀ կառավարության եւ ՎԶԵԴ-ի միջեւ ձեւաւորուած սերտ եւ արդիւնաւետ համագործակցութիւնը, որուն հետեւանքով Հայաստանի մէջ տարբեր ոլորտներու մէջ կ'իրականացուին բազմաթիւ ծրագրեր:



Նիկոլ Փաշինեան նշած է, որ այս տարի կը լրանայ երկրորդ համագործակցութեան 30-ամեակը եւ այս երեք տասնամեակներու համագործակցութիւնը երթալով ալ աւելի զարգացած ու ամրապնդուած է:

Վարչապետին խօսքով՝ այդ փոխգործակցութիւնը նպաստած է նաեւ ՀՀ տնտեսութեան կայունութեան, այդ շարքին՝ կորուստներու պակասեցման ընթացքում:

Գործադիր ղեկավարին խօսքով՝ Հայաստանի մէջ իրականացուող ժողովրդավարական բարեփոխումները, նաեւ տնտեսութեան բնագաւառին մէջ, կ'իրականացուին յաջողութեամբ, որուն հետեւանքով տնտեսական ազատութեան համաշխարհային ցուցակին մէջ Հայաստանը բարձրացած է 11-րդ հորիզոնական:

Վարչապետը համոզուած յայտնած է, որ այդ ամէնը պիտի նպաստէ Հայաստանի հետագայ տնտեսական աշխուժութեան ու զարգացման:

ՎԶԵԴ նախագահը եւս գոհունակութիւն յայտնած է ՀՀ կառավարութեան հետ փոխգործակցութենէն եւ յաւելած, որ իրականացուող համատեղ ծրագրերը շարունակաբար կ'ընդլայնուին: Պասսոն կարեւորած է ենթացող ծրագրերու զարգացման, ճանապարհաշինութեան, մասնաւոր հատուածի եւ այլ ուղղութիւններով ծրագրերու իրականացումը եւ նշած է, որ ՎԶԵԴ-ը պատրաստ է ընդլայնելու երկրորդ փոխգործակցութիւնը:

Հանդիպման ընթացքին զրուցակիցները քննարկած են հետագայ համագործակցութեան վերաբերող տարբեր հարցեր:

ՁԵՐՄՈՒԿ ԶԻՄԻՍԱՅԻՆ ՀԱՏՈՒԱԾԵՆ ՀԱՎԱՌԱԿՈՐԴԻ 50-60 ՀՈՂԻՆՈՑ ԽՈՒՄԲ ԵՆ ԲԱՇՈՒԱԾ Է

Տեսախցիկներով դիտարկման հետեւանքով պարզ դարձած է, որ Ձերմուկի մէջ հիւսիսային հատուածէն հակառակորդի 50-60 հոգիանոց խումբ ետ քաշուած է, հակառակորդի միայն մէկ խումբ կը գտնուի Ձերմուկի մատոյցներուն մօտ՝ 4.5 քմ հեռավորութեան վրայ՝ բլուրի գագաթին, սակայն այդ խումբը զրկուած է կենսունակութենէն, շրջափակուած է:



Այս մասին ասաց Չինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ Ետուարտ Արեւանը Ձերմուկի մէջ լրագրողներու հետ ճեպագրոյցին:

«Ոչ թէ ամբողջ ճակատով հասած են Ձերմուկի մատոյցներ, այլ միայն մէկ խումբ կը գտնուի բլուրի գագաթին վրայ: Եւ կենսունակութեան տեսակետէն, թէ՛ հակառակորդի այդ խումբին սնուցում չ'ըլլայ՝ թէ՛ սնունդով, թէ՛ ջուրով, ապա մի քանի օրուան ընթացքին անոնց միջոցները կը սպառուին եւ ստիպուած պիտի ըլլան այնտեղէն դուրս գալ: Խումբը կողքերէն շրջափակուած է մեր ստորաբաժանումներուն կողմէ», ըսաւ ԳԸ պետը:

Մարտավարական իրադրութիւնը ան գնահատեց կայուն: Արեւանը վստահ է, որ հայկական կողմի հմուտ գործողութիւններուն շնորհիւ այդ խումբը այդտեղէն կը հեռանայ:

«Պիտի չ'ընդլայնուին, որ ապահովուի անոնց կենսունակութիւնը, ինքնաշարժներու շարժ դեպի մեր տարածք պիտի չ'ըլլայ, ներկայ դրութեամբ ալ չկայ, իրենց չեն կրնար բերել, սնունդ ու ջուր ապահովել, եւ կենսունակութիւնը կորսնցնելով՝ խումբը ետ պիտի քաշուի, պիտի միանայ իրենց հիմնական ստորաբաժանումներուն, որոնք Ձերմուկի մատոյցներէն կը գտնուին աւելի մեծ խորութիւններու՝ 7-8-10 քմ հեռավորութեան վրայ», ըսաւ ԳԸ պետը:

«ՆԱԽԱԳԱՎԷՐ ՎԻԵՐՆԱՄԻ ՆՈՐԱՆՇՆԱԿ ԴԵՄՊՆԵՐՆ ԵՆՆԸ Է, ՈՐ ԱՏՐՊԷՅՃԱԿՆԻ ՈՐԵՒԷ ՈՏԵՂՈՒԹԻՒՆ ՊԷՏԵ Է ԱՐՇԱՆՆԱԿ ՀԱՎԱՉՎԵՑՈՒԹԵԱՆ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանի իր հաւատարմագրերը յանձնած է Հայաստանի մէջ Վիեթնամի Սոցիալիստական Հանրապետութեան նորանշանակ դեսպան Տանկ Մին խոյը:



Վահագն Խաչատուրեանը շնորհաւորած է դեսպանը պաշտօնի ստանձնման առթիւ եւ մաղթելով է արդիւնաւետ աշխատանք բոլոր նախաձեռնութիւններուն մէջ:

Անդրադարձ կատարուած է հայ-ատրպէյճանական սահմանի երկայնքով ատրպէյճանական զինուած ուժերուն կողմէ իրականացուած լայնածաւալ ռազմական գործողութիւններուն: Նախագահ Խաչատուրեան նշած է, որ անընդունելի եւ խստօրէն դատապարտելի է որեւէ պատերազմական գործողութիւն եւ քաղաքացիական բնակչութեան հրետակոծութիւն:

Անոր խօսքով՝ Ատրպէյճանի որեւէ ոտնձգութիւն պետք է արժանանայ հակազդեցութեան, ինչպէս նաեւ միջազգային հանրութեան հասցեական արձագանգի:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԷՋ ԱՅՑԵԼԱԾ Է ՀՐԵՏԱԿՈՇՈՒԹԵՆԵՆ ՎՆԱՍՈՒԱԾ ՁԵՐՄՈՒԿԻ ՀՐԾԷՋՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԶՈԿԱՏ

ՀՀ արտակարգ իրավիճակներու նախարար Արմէն Փամբուխչեան այցելած է Վայոց Ձորի մարզ: Գերատեսչութեան ղեկավարը այցելած է ՓՃ ՄՓՎ Ձերմուկի հրշէջ-փրկարարական ջոկատ, որուն շէնքը Հայաստանի Հանրապետու-



թեան նկատմամբ Ատրպէյճանի սանձազերծած յարձակման եւ ծաւալած մարտական գործողութիւններուն հետեւանքով վնասուած էր: Մասնաւորապէս, կտորուած էին շինութեան պատուհաններուն ապակիները եւ տուժած են հարեւանութեամբ կայանուած ինքնաշարժները: Նախարար Փամբուխչեանը ծանօթացած է իրավիճակին, գրուած է անձնակազմին հետ, տուած է համապատասխան յանձնարարականներ:

Գերատեսչութեան ղեկավարը այցելած է նաեւ ԱԻՆ փրկարար ծառայութեան բժշկական ապահովման վարչութեան եւ մարզային վարչութեան հրշէջ-փրկարարական ջոկատի անձնակազմի անդամներէն ձեւաւորուած մարտական հերթապահութիւն իրականացնող, խումբերու տեղակայման վայրեր: Ան գրուած է անձնակազմին հետ, հետաքրքրուած է ծառայութեան պայմաններով, մաղթած է անփորձանք ծառայութիւն:

Նոյն օրը Ձերմուկ քաղաքին մէջ արտակարգ իրավիճակներու նախարար Արմէն Փամբուխչեան հանդիպում ունեցած է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար Գնէլ Սանոսեանի եւ ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր Տրդատ Սարգսեանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ ԱՏՐՊԷՅՃԱԿԻ ՅԱՐՁԱԿԱՆ ՀԵՏԵՎՆԵՈՎ ՏԵՂԱՅԱՆՈՒԱԾ Է ԱՌՆՈՒԱԶՆ 7600 ԱՆՁ

Ըստ Մարդու իրաւունքներու պաշտպանի աշխատակազմի այս պահի տուեալներուն՝ Հայաստանի վրայ ատրպէյճանական յարձակման հետեւանքով Գեղարքունիքի, Սիւնիքի ու Վայոց Ձորի մարզերուն մէջ իրենց բնակավայրերէն տեղահանուած է անուազն 7600 անձ:

Անոնց մեծամասնութիւնը կանայք, երեխաներ, ծերեր ու հաշմանդամութիւն ունեցող անձեր են: Այդ շարքին տեղահանուած է 1437 երեխայ եւ 99 հաշմանդամութիւն ունեցող անձ:

«ՄԵՆԸ ՉԷԻՆԸ ԿՐՆԱՐ ՉԳԱԼ, ՄԵՆԸ ՆՈՅՆԻՍԿ ՊԱՐՏԱՒՈՐ ԷԻՆԸ»

ՀԱՊԿ ՄԻԱՅԵԱԼ ԸՏԱԲԻ ՊԵՏԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՊԿ միացեալ շտաբի պետ, գորավար-գնդապետ Անաթոլի Սիտորովը Հայաստան կատարած այցի ընթացքին հանդիպած է Հայաստանի մէջ Ռուսիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Սերկէյ Զոփիրքինի հետ:



«Մենք չ'էինք կրնար չգալ, մենք Նոյնիսկ պարտաւոր էինք, նշած է գորավար Սիտորովը:

Սերկէյ Զոփիրքինը իր հերթին ըսած է, որ Սիտորովը շատ կարեւոր առաքելութեամբ Հայաստան ժամանած է, որուն այստեղ կը սպասեն:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԻԱՅԵԱԼ ԿՈՉ Կ'ՈՒՂԴԵՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԶԻՆԱՎԱԿԱՐԻ ԱՇԵՐԻ ԲԱՆԱԿԻՆ ԿՈՂՄԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ

Եւրոպայի ապահովութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) ուղղած իրենց միացեալ նամակին մէջ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) եւ Եւրոպայի եկեղեցիներու խորհուրդի (ԵԵԽ) ընդհանուր քարտուղարները, իրենց խորհուրդներուն անդամ եկեղեցիներու անունով կոչ կ'ուղղեն՝ միջամրտելու ազգերի բանակին կողմէ Հայաստանի Հանրապետութեան դէմ կատարուած յարձակումը անմիջապէս կասեցնելու, զինադադար հաստատելու եւ շրջանէն ներս արդար ու մնայուն խաղաղութիւն հաստատելու: Անոնք կը յիշեն, թէ շաբաթ մը առաջ Գերմանիոյ մէջ գումարուած ԵՀԽ-ի 11-րդ համաժողովը անդրադառնալով կրցախի հարցին՝ կոչ ուղղած էր խաղաղ միջոցներով ու քաղաքական երկխօսութեամբ արդար լուծում մը տալու՝ ԵԱՀԿ-ի Միսսքի խմբակին կողմէ կատարուած նախաձեռնութեան ծիրէն ներս:



Վերոյիշեալ միացեալ նամակը նաեւ կ'անդրադառնայ, թէ յստակ տեղեկութիւններու եւ վերլուծումներու համաձայն Ատրպէյճան, Նկատի ունենալով միջազգային համայնքի ուշադրութեան կեդրոնացումը Ուքրանիոյ պատերազմին վրայ եւ օգտագործելով ներկայ աշխարհաքաղաքական պայմանները, կը փորձէ իր պայմանները պարտադրել Հայաստանի վրայ՝ զինուորական միջոցներով:

Վերոյիշեալ միացեալ նամակը նաեւ կ'անդրադառնայ, թէ յստակ տեղեկութիւններու եւ վերլուծումներու համաձայն Ատրպէյճան, Նկատի ունենալով միջազգային համայնքի ուշադրութեան կեդրոնացումը Ուքրանիոյ պատերազմին վրայ եւ օգտագործելով ներկայ աշխարհաքաղաքական պայմանները, կը փորձէ իր պայմանները պարտադրել Հայաստանի վրայ՝ զինուորական միջոցներով:

ՆԵՆՍԻ ՓԵՂՈՍԻՆ ՄԵՐԺԱԾ Է ԽՕՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատի նախագահ Նենսի Փելոսին մերժած է ներկայացնել Հայաստան կատարելիք այցելութեան մանրամասնութիւնները:



Ներկայացուցիչներու պալատի նախագահը հաստատած է, որ 17 Սեպտեմբերին պիտի այցելէ Հայաստան: Այցի ընթացքին անոր պիտի ուղեկցի նաեւ Ներկայացուցիչներու պալատի անդամ, դեմոկրատ պատգամաւոր Ընթի Սփիրը, որ հայկական արմատներ ունի:

Նենսի Փելոսին մերժած է այլ մանրամասնութիւններ ներկայացնել այցի հետ կապուած՝ ըսելով, որ Գոնկրեսի անդամները, որոնք կը ճամբորդեն, «չեն սիրեր ըլլալ թիրախին»: «Ամեն պարագայի, խօսքը կը վերաբերի մարդու իրաւունքներուն, ուեւ մարդու արժանապատուութիւնն ու արժեքը յարգելուն», ըսած է Փելոսին:



ԱՆՂԼԻԱՅԻ ՄԵԾ ԲԺԻՇԿ ԱՌԱՋԻՆ ԱՐԴԻ ՊԱՏՈՒԱՍՏԻ ՀԱՅՐ՝ ԷՏՈՒԸՐՏ ԾԵՆԸՐ (Edward Jenner) (1749 - 1823)

Անգլիացի մեծ բժիշկ և գիտնական, որ հիմք դրավ արդի պատուաստումին: Ան էր որ առաջին անգամ ըլլալով մարդիկ պատուաստեց ջրածաղիկի (smallpox) ժահրին դեմ: Արդի պաշտպանության համակարգի զօրացումը մարդու մարմնին մեջ շատ բան կը պարտի այս գիտնականին: Անգլիերեն vaccine բառը կը սեռի Variolae vaccinae (smallpox of the cow) բառեն, որովհետև առաջին անգամ պատուաստը պատրաստուեցաւ կովաբուխին (cowpox), այսինքն՝ կովու մարմնին մեջ աճած ժահրերէ:



Ծէնըր ծնած է Անգլիոյ Կլաուսթրշիր Լախանգի Պրըքլի քաղաքին մէջ, պատուելի Սթեֆըն Ծէնըրի յարկին տակ: Ան ստացաւ թունոյ ջրհատուեալ կրթութիւն և ութերորդ գաւաակն էր ինը գաւակ ունեցող ընտանիքին մէջ: Փոքր տարիքէն ան պատուաստ ստացած էր ջրածաղիկի դեմ և այդ քայլը վնասած էր իր առողջութեան: Այս էր պատճառներէն մէկը, որ ինք ապագային փնտռեալ արեւելի ապահով և ազդու միջոց մը պատուաստումի համար: Պատուաստումի առաջին ձեւերը երրորդացի սորված էին Ասիոյ բժիշկներէն, որոնք զարգացուցած էին պատուաստումի նախնական ձեւերը:

14 տարեկանին որպէս աշկերտ ծառայեց Տանիէլ Լուտրու կոչուող բժիշկի մը մօտ և անկէ սորվեցաւ վիրաբուժութեան ցարդ ծանօթ բոլոր գաղտնիքները: Այս 21 տարեկանին մտաւ վիրաբոյժ ճոն Հանթըրի դարմանատունը իր գիտելիքները զարգացնելու համար: Այս բժիշկը մեծ ազդեցութիւն ունեցաւ երիտասարդ Էտուըրտի վրայ: Անոր խօսքերը. «Մի մտածեր, այլ՝ փորձէ», որոնք ազդեցիկ էին Լուսաւորութեան դարուն, միշտ մնացին երիտասարդին ակնաչնդուն մէջ և այս է որ դարձաւ իր յաջողութեան բանալին:

Աւարտելէ ետք ան վերադարձաւ Պրըքլի և դարձաւ ընտանեկան բժիշկ: Ապա ան միացաւ Կլաուսթրշիրի բժիշկներու խումբի մը, որոնք կը հաւաքուէին պարբերաբար և գիտական թուղթեր կը պատրաստէին ու կը կարդային տարբեր հիւանդութիւններու մասին:

1768 թուականին անգլիացի բժիշկ ճոն Ֆիլպսթըր նկատած էր, թէ այն մարդիկ, որոնք կը վարակուէին կովաբուխով (cowpox) ինքնաբերաբար պաշտպանուած կ'ըլլային ջրածաղիկի (smallpox) ժահրին դեմ: Այդ տարիներուն այս հիւանդութիւնը մահացու էր և բնակչութեան 10 առ հարիւր, իսկ քաղաքի բնակչութեան 20 առ հարիւրը անկէ կը մեռնէին: Ծէնըր նկատեց, թէ կովու հետ գործ ունեցող մարդիկ չէին մահանար ջրածաղիկէն: Ուրեմն, 14 Մայիս 1796-ին ան կատարեց առաջին պատուաստումը ճէյմզ Ֆիփս կոչուող 8 տարեկան տղեկի մը: Ան կովաբուխի վարակը հաւաքեց սպասուհիէ մը, որ կ'աշխատէր կովերու հետ ու զայն պատուաստեց տղեկին: Տղան տաքութիւն և որոշ անհանգստութիւն ունեցաւ, սակայն առանց որեւէ ծանր հետեւանքի: Ան այսպիսով փաստեց, որ կարելի է մարդիկ թէթեւօրէն վարակելով ապագային փրկել անոնց կեանքը, երբ իսկական վարակում կը պատահի: Էտուըրտ Ծէնըր միշտ պիտի յիշուի որպէս արդի պատուաստումի հայր, մարդ մը որ փրկեց միլիոնաւոր մարդոց կեանքը: Պատիւ արժանաւորին:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՓՈՒԱՐԻՆԵԼԻ՞ ԴԸ. ՄԱՍ ԴԻՆԱՍ ԱՆ ՇԱՍ ԿԱՍ ՄԵԾԸ ՍՈՐԻՒՎ

Սուրիան կը համարուի ռազմավարական դիրք ունեցող պետութիւն: Սուրիոյ տիրողը կը տիրէ արեւելեան Միջերկրականի շրջանէն մինչեւ Աֆղանիստան երկարող շրջանին: Անոր տիրողը կը տիրէ արաբական երկիրներու ծովային ելքին և կրնայ փակել Իրաքի ծովային ելքը, որ ընդհանրապէս տեղի կ'ունենայ Սուրիոյ և Լիբանանի միջոցով: Արեւմուտքին համար, Սուրիա կը հանդիսանայ այն հանգոյցը, ուրկէ Ծոցի արաբական կազմ պիտի հասնի Եւրոպա՝ Թուրքիայէն անցնելով: Այս է որ կ'ուզէր պատրաստել Արեւմուտքը Ռուսիան զրկելու համար իր եկամուտէն, նաեւ վերջ դնելու համար ռուսական նաւատորմի դոյութեան Սուրիոյ մէջ: Այս իրականութիւնը գիտնալով և որ նախագահ Փութինի վարչակարգը որոշեց օգնել Սուրիոյ իր ներքին պատերազմին մէջ, որ վերածուեցաւ ահաբեկիչներու դէմ մղուած պատերազմի: Թուրքիա կը հանդիսանայ իսլամական աշխարհին մէջ Արեւմուտքի յենարաններէն մէկը: Անոր և Սեուտական Արաբիոյ միջոցով Արեւմուտքը կրցած է տասնեակ տարիներ իր հակակշիռ ունենալ իսլամական երկիրներու ընդհանուր քաղաքական ուղղութեան վրայ: Նաեւ անոր վստահուած է Սուրիան, Իրաքը և այլ արաբական երկիրներ հսկելու պարտականութիւնը: Այս դերը կատարելու համար, Թուրքիայէն պահանջուեցաւ հազարաւոր զինեալներ մտցնել Սուրիա այդ երկրին վարչակարգը փոխելու համար 2011 թուականէն սկսեալ: Ռուսիա և Իրան նկատելով վտանգը, իրենց ռազմավարական շա-



հերէն մեկնելով, օգնութեան ձեռք երկարեցին սուրիական բանակին և Արեւմուտքի ծրագիրը մասամբ ձախողեցաւ: Մասամբ, որովհետև տակաւին պատերազմը իր աւարտին չէ հասած: Արեւմուտքը տակաւին չի ճանչնար Ասատի վարչակարգը և անոր դէմ կը կիրարկէ պատժամիջոցներ: Ամերիկեան, թրքական բանակները տակաւին կը գտնուին Սուրիոյ հողին վրայ:

(Շարունակելի) Աղբիւր՝ «Տը Ռիվենը Աֆ Ժիոկրաֆի», Ռոպըրթ Բափլան

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՒՆ ՈՂԵՂԸ

ԱՄՆ-ի «ԵՆՂ» համալսարանէն խումբ մը հետազոտողներ սկսած են կատարել հետազոտութիւն մը՝ ճշդելու համար այն յատկութիւնները, որ ունի մարդուն ուղեղը և գայն կը դարձնէ իւրայատուկ բոլոր ապրող էակներուն մէջ: Գիտնականներ նկատի առին մեզի ամենամօտիկ չորս մարդակապիկները և քննեցին անոնց ուղեղին կազմուածքը: Անոնք նաեւ նկատեցին, թէ ինչ բաները որ մարդկային ուղեղը կը դարձնեն իւրայատուկ, նաեւ հոգեկան հիւանդութեան պատճառ կրնան դառնալ:

Հետազոտութեան ընթացքին օգտագործեցին մարդու, շիմփանզի, մաքաք և մարմոսթէ կապիկներու ուղեղի վերի հատուածի քննութեան ձեւը: Քննելէ ետք 109 ուղեղի բջիջի տեսակներ, որոնք իրարու կը նմանին մարդակապիկներու ընտանիքին մէջ, անոնք առանձնացուցին 5 տեսակ բջիջներ, որոնք կը գտնուին միայն մարդկային ուղեղին և շիմփանզի ուղեղին մէջ: Այդ բջիջին տեսակը կը կոչուի «microglia»: Այս բջիջներն են, որ մարդուն կու տան իր շրջապատի կլիմային և մթնոլորտին յարմարելու իւրայատուկութիւնը: Գիտնականներ յայտնաբերեցին ուրիշ զարմանալի երեւոյթ մը: Այս «microglia» ընտանիքի բջիջները կը պարունակեն ծին մը՝ «FOX P2», որ պատասխանատու է կարգ մը մարդկային հոգեկան հիւանդութիւններու ինչպէս՝ autism, schizophrenia և epilepsy:

(Սայլնս Տէյլի)

ՀՈԳԵԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՆԻ ՀՈՒՆՎՈՅԹԸ Բ. ՄԱՍ

Հագարաւոր տարիներէ ի վեր մարդը շատ բան կը պարտի վախի զգացումին, իր մշակոյթը զարգացնելու համար: Սկսելով նախամարդէն, ան ապրած է քարայրներու



մէջ, վախնալով գիշատիչ անասուններէ: Վախի զգացումը բնագոյնի զգացում է, որ գոյութիւն ունի բոլոր շնչող էակներու մօտ: Վախի զգացումը պաշտպանութեան առաջին օղակն է, պաշտպանելու համար էակը, որ վտանգի տակ է: Երբ վախցած ենք, մեր սրտի զարկերը կ'արագանան, կը քրտնենք, արեան հոսքը կ'ուղղուի մարմնի ծայրամասերէն դէպի ներքին գործարաններ, մկանները կը պրկուին և մարմնի ամբողջ կազմը կը պատրաստուի ընկալելու այդ վախին պատճառ եղող իրականութիւնը: Մեծ տարբերութիւն կայ մտահոգութեան (anxiety) և վախի միջեւ: Օրինակի համար, երբ կը լսենք, թէ մեր քալած վայրին մէջ արջ տեսնուած է, կը սկսինք մտահոգուիլ: Սակայն, երբ հեռուէն կը նկատենք արջը, արդէն մտահոգութիւնը կը վերածուի վախի զգացումի, իր բոլոր վերոյիշեալ ցուցանիշներով:

Աղբիւր՝ «Psychology of Fear»

ՊԱՏՈՒԹԻՒՆ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ ԽԵ. ՄԱՍ

Այս շարքով պիտի շարունակենք ներկայացնել Արեւմտեան Հայաստանի հարցին վերաբերող պատմութեան ծալքերը ու անոնց վերլուծումը: Ներկայացնելէ ետք փակուրդի շարժումի հիմնադիրները, որոնք մեծամասնութեամբ սիոնիստ հրեաներ էին, պիտի շարունակենք ներկայացնել թէ որո՞նք հովանաւորեցին փակուրդի շարժումը և ի՞նչ նպատակներու համար: Անշուշտ այդ օրերուն, բոլոր գործիչները հաւկոյր չէին: Սապահգիւլեան դիտել կու տար, որ սիոնականներ արեւելի վտանգաւոր թշնամիներ էին քան նոյնիքն թուրք սուլթանը, և կը թարգմանէր «Ժուռնալ Տը Ներպատ»-ի մէջ լոյս տեսած պերճախօս յայտարարութիւնը սիոնիստ Պերնառ Շթերնի, որ կ'ըսէր՝ «թուրքերու պաշտպանութիւնը հրեական հայրենասիրութեան ձեւ մըն է»: Եւ նոյնիսկ սիոնիստ Փրոֆ. Հիւմմէն չէր վարաներ յայտարարելու, թէ հրեաներու զարգացման նախապայմանն էր հայերու արեւելի մեծ աղետներու ենթարկուիլը:



Մեծ Եղեռնը չէր ուշանար ձեռնարկ այն երիտօրրեան, որոնց հետ իր անհեռաւոր գործակցութեան հետեւանքով ալ Հ.Յ.Ղ. հրաժարած էր նոյնիսկ Պերլինի դաշնագրի յօդուած 23-րդէն և 61-րդէն, որ դարձնած էր սիոնիստ Տիգրայէլին (1874-1880), վիճեցնելով Սան Սթեֆանոյի դաշնագրի հայանպաստ 16-րդ յօդուածը...:

(Շարունակելի) Աղբիւր՝ «Սիոնիզմի և Բանթուրիզմի Առնչութիւնները», Մեթր Գ. Տերտրեան, 1990

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆ ԻՆՍԻՒԼԻՆԻ ԴԵՂԱՅԱՏ

Խումբ մը հետազոտողներ Գանատայի «Պրիօշ Ընդմայիա» գիտահետազոտական կեդրոնէն կատարած են հետազոտութիւն մը՝ գտնելու համար ձեւ մը շաքարախտ տառապաողներուն ինսուլին տրամադրելու առանց սրբուովի: Հետազոտութեան ընթացքին անոնք նկատած են,



որ իրենց դեղահատը, որ փորձուած է առնետներու վրայ, ճիշդ սրկումի ձեւին նման կը մտնէ անոնց արեանին շըրջանին մէջ:

Այս փորձը յաջողելու պարագային, շատ մօտ ատենէն շաքարախտի հիւանդներ այլեւս ինսուլին ստանալու պէտք պիտի չունենան ասեղի միջոցով, այլ գայն պիտի ստանան դեղահատի միջոցով: Աշխարհի վրայ կան մօտ 9 միլիոն առաջին կամ ժառանգական տեսակի շաքարախտ տառապաողներ: Այս լուրը լաւ ձեւով պիտի ընդունուի անոնց կողմէ:

Աղբիւր՝ «https://www.sciencedaily.com»

ՄԵՍԿՈՅԹ ՈՒՆ ՄԻՋՆԱԿՐՈՒ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ՍՈՐԻՐ ՆԵՐՍԵՆ ՇՆՈՐՀԱԼԻ Թ. ՄԱՍ

Սուրբ Ներսէս Շնորհալի կամ Կլայեցի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Նուիրապետութեան ամենաբեղուն ու լուսաւոր հայրապետներէն մէկն է:

Հոս կը մէջբերենք Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին «Նախադրութիւնը»՝ Երատականը, որ գրած է «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին սկիզբը:

«Արդ, մենք կ'աղաչենք որ բարերարն Աստուած, բանայ ձեր միտքը, յօժարութեամբ սորվելու համար զայս, աղօթելու և Իրեն սիրելի ըլլալու: Եւ ձեր աղօթքի պահուն յիշեցէ՛ք ի Քրիստոս, Գրիգորիս կաթողիկոսը, և իր եղբայրը Ներսէսը, որ յօրինողն է այս աղօթքին: Եւ դուք որ կ'օրինակեք այս աղօթքը, գրեցէ՛ք անոր հետ նաեւ այս խրատականը, որոնք որ զայս կը գրեն, պիտի գրուին յաւիտենական կենաց դպրութեան մէջ»:

Միայն «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը բաւարար է վարկ բերելու համար սիրելի Հայրապետին: Ստորեւ կը շարունակենք ներկայացնել աղօթքին գրաբար և աշխարհաբար տարբերակները:

Հաւատով Խոստովանիմ Խնամող արարածոց, պահեաւ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւց, և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա՛ քո արարածոց ե՛ւ ինձ՝ բազմամեղիս:

Արարածները խնամող Տէր, Ըն խաչիդ նշանովդ պահեաւ հոգիս և մարմինս մեղքի խաբկանքներէ, դեներու փորձութիւններէ, անիրաւ մարդերէ և հոգիի և մարմնի ամեն կերպ վտանգներէ. և ողորմե՛ ըն արարածներուդ ե՛ւ ինձ՝ բազմամեղիս:

(Շարունակելի) «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն», Մանուկ Աբեղեան, Տպ. Սեւան, 1968

ՆՈՐ ԱՐԴԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՈՒՆՏՈՉԻ ՕԳՏԱԿԱՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ Բ. ՄԱՍ

Եթէ կ'ուզեք ծրագիրներ որոնք կ'աշխատին առանց «install» ընելու, ուրեմն դուք պտք ունիք այս ծրագիրներուն, որ կրնաք դնել ձեր տիպքին վրայ և աշխատանքը առանց «install»-ի, միայն վրան սեղմելով: Շարունակենք սերտել այն կայքէջերը, որոնք կը պարունակեն այս ծրագիրները:

Առաջին կայքէջն է PenDriveApps.com: Այս կայքէջը կը պարունակէ ծրագիրներ 60 դասակարգերու մէջ:

Աղբիւր՝ «www.makeuseof.com»

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերջին օրերուն, Ատորպեյճանի գինուած ուժերը լայնածաւալ պատերազմական գործողութիւններով կը վտանգեն Հայաստանի սահմանները:

Առ այս, Հ.Մ.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը խնդրուի կը դատապարտէ սոյն ոտնձգութիւնը եւ գորավիզ կը կանգնի մեր հայրենիքին սահմանը պաշտպանող հայոց քաջարի բանակին:

Այս իրադարձութիւնները նկատի առնելով, Հ.Մ.Մ.-ի 100-ամեակին նուիրուած Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Երեւանի մէջ տեղի ունենալից պաշտօնական հանդիսութիւնն ու ճաշկերոյթը յետաձգուած են:

Յարգանք ու խոնարհում
Նահատակներուն:

Հ.Մ.Մ.-ի ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
16 Սեպտեմբեր 2022

Հովանաւորութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅԵԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՄԵՍՐՈՒՅԱՆԻ ԿԻՆՈՒՅԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հ.Մ.Մ.-ի 100-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 21 Սեպտեմբեր 2022-ին, երկուշաբթի ժամը 7:00-ին, ԵՐԵՎԱՆ, 18, ՄՈՍԿՎԱ կինոթատրոնի Կարմիր Դահլիճ սրահին մէջ:

Հրատել

Կառավարութեամբ
Հ.Մ.Մ.-ի ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Հ.Մ.Մ.-ի Հովանաւորութեամբ 100-Ամեակին

ՆՈՒՐԱՆՈՒՅԻՆ ԸՄՈՒՄՆԵՐԻՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՍՓՈՐՏԻՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2022-ին, երկուշաբթի ժամը 6:30-ին սրահը Հրազդանի կիսը 89/1, ԵՐԵՎԱՆ Օնտոլոգիայի Համայնք

Ցանկեղջի սեպտեմբեր 2022-ին: Համայնքի հեռ. 077-592784 և 093-337995 թիւերով

ԱՆՈՒՄՆԵՐ ԳՐԱԿԱՆ

ԻՐՈՒՓ ԱԿԻ ԽՐԱԿԱՆԵՐՈՒ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՖԵՅՆՆՈՒՐՏ ԵՒ ԵՈՒՆԱՅԹԸՆ ՅԱՂԹԵՑԻՆ

Երրօրյա ֆուտբոլի ակումբներու երկրորդ մրցաշարքի՝ Իրոփա Լիկի խմբակներու փուլի երկրորդ հանգրուանի մրցումներուն, Ե. խմբակի 3-րդ դիրքը գրաւող «Մանչեսթըր Եունայթեդ»-ը իր դաշտէն դուրս յաղթեց առաջատար Մոտովայի «Շտրիֆ»-ին ու գրաւեց 2-րդ դիրքը: Յարձակող Սանչո՝ 17-րդ եւ փորձուկալցի Քրիսթիանո Ռոնալտո սուզանայինով՝ 39-րդ վայրկեաններուն նշանակեցին կոլերը, երկուսն փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.



- Ա. խմբակ.** - Պոնտե/Կլիմօ (Նոր.) - Չուրիխ (Չուից.) 2-1
- Բ. խմբակ.** - Տիւսանո Զիւ (Ուր.) - ԱԷԸ Լաւնաքա (Կիպ.) 0-1
- Ռէն (Ֆր.) - Ֆեներապահչէ (Թրք.) 2-2
- Դասաւորում.** 1) Ռէն 4 կէտ 4-3, 2) Ֆեներապահչէ 4 կէտ 4-3, 3) ԱԷԸ 3 կէտ 2-2, 4) Տիւսանո Բ. 0 կէտ 1-3
- Գ. խմբակ.** - Ռէալ Պեթիս (Սպ.) - Լուտոկորեց (Պլ.) 3-2
- Ռոմա (Իտ.) - ՅՃԸ Յելսինքի (Ֆին.) 3-0
- Դասաւորում.** 1) Ռէալ Պեթիս 6 կէտ 5-2, 2) Լուտոկորեց 3 կէտ 4-4, 3) Ռոմա 3 կէտ 4-2, 4) ՅՃԸ 0 կէտ 0-5
- Դ. խմբակ.** - Իւնիոն ՍԷՆ Կիլուազ (Պլճ.) - Մալմեօ (Շուէ.) 3-2
- Սփորթինկ Պրակա (Փոր.) - Իւնիոն Պերլին (Գեր.) 1-0
- Դասաւորում.** 1) Սփորթինկ Պ. 6 կէտ 3-0, 2) Իւնիոն ՍԷՆ Կիլուազ 6 կէտ 4-2, 3) Իւնիոն Պ. 0 կէտ 0-2, 4) Մալմեօ 0 կէտ 2-5
- Ե. խմբակ.** - Ռէալ Սոսիետատ (Սպ.) - Օմնիա Նիկոսիա (Կիպ.) 2-1
- Շերիֆ Թիրասպոլ (Մլո.) - Մանչեսթըր Եուն. (Անգ.) 0-2
- Դասաւորում.** 1) Ռէալ Սոսիետատ 6 կէտ 3-1, 2) Մանչեսթըր Եուն. 3 կէտ 2-1, 3) Շերիֆ 3 կէտ 3-2, 4) Օմնիա 0 կէտ 1-5
- Զ. խմբակ.** - Միտթիլանտ (Դան.) - Լաքո Ռոմա (Իտ.) 5-1
- Ֆեյենուրտ Ռոթթըր. (Հոլ.) - Շթուրմ Կրազ (Աւստ.) 6-0
- Դասաւորում.** 1) Ֆեյենուրտ 3 կէտ 8-4, 2) Միտթիլանտ 3 կէտ 5-2, 3) Լաքո 3 կէտ 5-7, 4) Շթուրմ 3 կէտ 1-6
- Է. խմբակ.** - Օլիմպիաքոս (Յուն.) - Ֆրայպուրկ (Գեր.) 0-3
- Զարապաղ (Ատր.) - Նանթ (Ֆր.) 3-0
- Դասաւորում.** 1) Ֆրայպուրկ 6 կէտ 5-1, 2) Զարապաղ 3 կէտ 4-2, 3) Նանթ 3 կէտ 2-4, 4) Օլիմպիաքոս 0 կէտ 1-5
- Ը. խմբակ.** - Թրապանսպոր (Թրք.) - Ռէտ Սթար Պելկրատ (Սրպ.) 2-1
- Մոնաքօ (Ֆր.) - Ֆերենցվարոշ (Յւգ.) 0-1
- Դասաւորում.** 1) Ֆերենցվարոշ 6 կէտ 4-2, 2) Թրապանսպոր 3 կէտ 4-4, 3) Մոնաքօ 3 կէտ 1-1, 4) Ռէտ Սթար 0 կէտ 1-3

մաս կազմած Դանիոյ «Սիլվապորկ»-ը իր դաշտին վրայ գիջեցաւ Անգլիոյ «Ուեսթ Յեմ Եունայթեդ»-ին: Չալըճըր մնաց պահեստայիններու նստարանին վրայ: Դ. խմբակին մէջ, սարգիս Ադամեանի մաս կազմած Գերմանիոյ «Քեյլն»-ը իր դաշտին վրայ յաղթեց Չեխիոյ «Սլովաքո»-ին եւ գրաւեց առաջատարի դիրքը: Սարգիս Ադամեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին եւ 11-րդ վայրկեանին նշանակեց խումբին առաջին կոլը, պաշտպան Քիլիանի փոխանցումով: Ը. խմբակին մէջ, Հայաստանի ախոյեան, 4-րդ



դիրքը գրաւող «Փիւնիկ»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 3-րդ դիրքը գրաւող Սլովաքիոյ ախոյեան «Սլովան Պրաթիսլաւա»-ի դէմ, յաղթանակ տարաւ եւ գրաւեց 2-րդ դիրքը: Կիսապաշտպան Արտակ Դաշեան՝ 35-րդ եւ Լիկերիացի յարձակող Օթուկանճօ՝ 36-րդ վայրկեաններուն նշանակեցին կոլերը, վենեզուելացի պաշտպան Կոնգալեզի երկու փոխանցումներով: Տիգրան Բարսեղեան մասնակցեցաւ «Սլովան»-ի ամբողջ մրցումին եւ 23-րդ վայրկեանին դեղին քարտ ստացաւ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Ռիկա ՖՍ (Լաթ.) - Յարց (Սկ.) 0-2
- Իսթամպուլ Պաշաքէիքի (Թրք.) - Ֆիորենթինա (Իտ.) 3-0
- Դասաւորում.** 1) Իսթամպուլ 6 կէտ 7-0, 2) Յարց 3 կէտ 2-4, 3) Ռիկա 1 կէտ 1-3, 4) Ֆիորենթինա 1 կէտ 1-4
- Բ. խմբակ.** - Սթեաուա Պուխ. (Ռում.) - Աւտըրլէյխթ (Պլճ.) 0-0
- Սիլվապորկ (Դան.) - Ուեսթ Յեմ Եուն. (Անգ.) 2-3
- Դասաւորում.** 1) Ուեսթ Յեմ 6 կէտ 6-3, 2) Աւտըրլէյխթ 4 կէտ 1-0, 3) Սթեաուա 1 կէտ 1-3, 4) Սիլվապորկ 0 կէտ 2-4
- Գ. խմբակ.** - Լեխ Փոզնան (Լեհ.) - Աւտրիա Կիեննա (Աւստ.) 4-1
- Յիլըպորկ (Դան.) - Ուեսթ Յեմ Եուն. (Անգ.) 2-3
- Դասաւորում.** 1) Ուեսթ Յեմ 6 կէտ 6-3, 2) Աւտըրլէյխթ 4 կէտ 1-0, 3) Սթեաուա 1 կէտ 1-3, 4) Սիլվապորկ 0 կէտ 2-4
- Դ. խմբակ.** - Լեխ Փոզնան (Լեհ.) - Աւտրիա Կիեննա (Աւստ.) 4-1
- Յիլըպորկ (Դան.) - Ուեսթ Յեմ Եուն. (Անգ.) 2-3
- Դասաւորում.** 1) Վիյարեալ 6 կէտ 6-4, 2) Լեխ Փոզնան 3 կէտ 7-5, 3) Յիլըպորկ 1 կէտ 1-2, 4) Աւտրիա 1 կէտ 1-4
- Դ. խմբակ.** - Փարթիզան Պելկրատ (Սրպ.) - Նիս (Ֆր.) 1-1
- ՖՍ Զեյն (Գեր.) - Սլովաքո (Չեխ.) 4-2
- Դասաւորում.** 1) Զեյն 4 կէտ 5-3, 2) Փարթիզան 2 կէտ 4-4, 3) Նիս 2 կէտ 2-2, 4) Սլովաքո 1 կէտ 5-7
- Ե. խմբակ.** - Ափոլլոն Լիմասոլ (Կիպ.) - Տիփիթի-1 (Ուր.) 1-3
- ԱՉ Ալքմար (Հոլ.) - Վատուզ (Լիխ.) 4-1
- Դասաւորում.** 1) ԱՉ 6 կէտ 5-1, 2) Տիփիթի-1 3 կէտ 3-2, 3) Ափոլլոն 1 կէտ 1-3, 4) Վատուզ 1 կէտ 1-4
- Զ. խմբակ.** - Տիւրկարտըն (Շուէտ.) - Մոլտե (Նոր.) 3-2
- Կենթ (Պլճ.) - Շեմրոք Ռովըր (Իրլ.) 3-0
- Դասաւորում.** 1) Կենթ 4 կէտ 3-0, 2) Տիւրկարտըն 4 կէտ 3-2, 3) Մոլտե 1 կէտ 2-3, 4) Շեմրոք Ռովըր 1 կէտ 0-3
- Է. խմբակ.** - Սլաւիա Փրակ (Չեխ.) - Պալքանի (Քու.) 3-2
- ԱՖՆ Զլուժ (Ռում.) - Սիվասպոր (Թրք.) 0-1
- Դասաւորում.** 1) Սլաւիա 4 կէտ 4-3, 2) Սիվասպոր 4 կէտ 2-1, 3) Պալքանի 1 կէտ 3-4, 4) Զլուժ 1 կէտ 1-2
- Ը. խմբակ.** - Շալկիքի (Լիթ.) - Պազը (Չուից.) 0-1
- Փիւնիկ (Հայ.) - Սլովան Պրաթիսլաւա (Սլվ.) 2-0
- Դասաւորում.** 1) Պազը 6 կէտ 4-1, 2) Փիւնիկ 3 կէտ 3-3, 3) Շալկիքի 1 կէտ 0-1, 4) Սլովան 1 կէտ 0-2:

ԻՐՈՒՓ ԸՈՆՖԵՐԸՆՍ ԱԿԻ ԽՐԱԿԱՆԵՐՈՒ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՓԻՆԻԿ ՅԱՂԹԵՑ ԱՆՈՎԱՆԻՆ

Երրօրյա ֆուտբոլի ակումբներու երրորդ մրցաշարքի՝ Իրոփա Ըոնֆըրընս Լիկի խմբակներու փուլի երկրորդ հանգրուանի մրցումներուն, երկրորդ խմբակին մէջ, Չալըճըրի

ARARAD 85

ՄԵՐ ԵՐԹԸ

ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՄԻԱՍԻՆ

Այս տարի կը լրանայ «Արարատ» օրաթերթի հիմնադրութեան 85-ամեակը:

Արարատ սրբազան լեռան անունը կրող մեր օրաթերթը իր հիմնադրութենէն ի վեր մամուլի ճամբով ծառայած է հայ ազգին, մանաւանդ Սփիւռքի մէջ, ուր մամուլը կը հանդիսանայ հայապահպանութեան գործակալներէ մին:

Այս 85 տարիներուն ընթացքին «Արարատ» օրաթերթը, ի հեճուկս ակամայ կարճ խափանումներուն, լոյսի բարիքին եկած է շնորհիւ իր 5 հիմնադիրներուն, ա) իր կնքահայրը հանդիսացող ՄԴԿԿ-ին, բ) իր նուիրեալ ու ժրջան խմբագիրներուն եւ անձնակազմի անդամներուն, գ) իր կոչումին հաւատացող յօդուածագիրներուն եւ աշխատակիցներուն, դ) իր հաւատարիմ ընթերցողներուն, ե) իր առաքելութեան շարունակութիւնը երաշխաւորելու համար իրենց լուծման նուիրած հաւատարիմ հայորդիներու:

Այս առիթով մենք շնորհակալութիւն կը յայտնենք այս հիւսկ հիմնադիրները հանդիսացող իւրաքանչիւրին, անհատ առ անհատ: Այս հիւսկին միջեւ յաջող փոխկապակցութեան շնորհիւ է որ «Արարատ» օրաթերթը 85 տարիներէ ի վեր կը շարունակէ իր լրատուական աշխատանքը, կը շարունակէ իր բաժին պարտականութիւնը կատարել Սփիւռքի մէջ հայապահպանման աշխատանքը անխաթար պահելու ուխտին մէջ:

Մենք վստահ ենք, որ բոլոր վերոնշեալներուն բարի կամեցողութեան եւ վճռակամութեան շնորհիւ ծերունագրող տարիքի հասած, սակայն ընդմիջտ երիտասարդ ու աշխոյժ «Արարատ» օրաթերթը պիտի շարունակէ ընթանալ 85 տարիէ ի վեր իր ակօսած ճամբէն, տեղեկատուութեան լոյսը սփռելով աշխարհի չորս ծագներուն գտնուող հայերուն:

Տասնամեակներ շարունակ հայ ժողովուրդի առօրեային ընկերակից դարձած օրաթերթը, որ շրջանցած է գանազան վերիվայրումներ, այժմ կը դիմագրաւէ Լիբանանի ներկայի աննախադէպ եւ տնտեսապէս ճակատագրական պայմանները, ու իր բոլոր ուժերով կը ձգտի յաղթահարելու բազմաթիւ դժուարութիւնները, իր լրատուական եւ լրագրական ազգային գոյերթը ամենայն պատասխանատուութեամբ պահպանելով:

Արդարեւ, ինչպէս եւ միշտ գտնուած են մամուլի առաքելութեան հաւատացողներ, մամուլի երթը անխափան պահելու համար իրենց սուղն ու ամեն տրամադրողներ, մամուլին նիւթապէս աջակցած նուիրական հայորդիներ, վստահ ենք, որ այսօր եւս կան այդպիսի պատուական մարդիկ, որոնք պատրաստ են իրենց լուծման ներդրելու յանուն «Արարատ» օրաթերթի գործունեութեան յարատեւութեան:

Ուստի, իրենց նիւթական աջակցութեամբ հանդէս գալ փափաքողներէն կը խնդրենք կապ հաստատել օրաթերթի տնօրէնութեան հետ ե-նամակով՝ aradoratert@gmail.com, կամ գանազահարելով +961-3-542782 թիւին:

Կանխայայտ շնորհակալութիւն:

Մեր երթը պիտի շարունակենք միասին:

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
102-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ
ՄԱՏԱԴԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն նուիրուած անանդական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 15 Յոկտեմբեր 2022-ին:

Հետեւեալը կը կ'ուղղենք բոլոր հայրենակիցներուն, որ իրենց մատաղցու ոգիւսով կամ նուիրատուութիւնները փոխանցեն Հաճնոյ Հայրենակցական գրասենեակ, Սք. Գեորգ Եկեղեցոյ խորհրդատուն եւ կամ շրջող հանգանակիչներուն:

Հաճնոյ Հայրենակցական Միութեան Վարչութիւն

ՀՈԳԵ ՀԱՆԳԻՍ

Ողբ. ՕՆՆԻԿ ՍՎԱՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 18 Սեպտեմբեր 2022-ին, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ Եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

www.araraddaily.com

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: aradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية إقليمية | المجرة المسبوبة: أني صرافيان
تصدر عن شركة مطبوعات والمطبوعات (م.م.)